

Պոֆիգիզմ

Նվիրվում է Սև Սևեյանին

«Есть миллионы путей, все они одинаковы: они ведут в никуда. Они ведут в кусты или через кусты.

Важно знать- есть ли у твоей пути СЕРДЦЕ? Если есть, то это хороший путь, если-нет, то от него никакого толку.

Для меня существует только тот путь, которым я странствую, любой путь, который имеет СЕРДЦЕ.

И я следую моему пути и единственный достойный вызов для меня- пройти его до последней пяди. И я иду по нему, иду и смотрю- пока я жив».

Карлос Кастанеда

Գիշերվա ժամը 3 անց էր 48 րոպե: Ինչպես պարզեցի դրանից վայրկյաններ անց: Տախշան էրագի մեջ անկապ ժպտում էր կողքով անցնող հորթի էրեսին, երբ Ջեյմս Բրաունը ձենը զցեց գլուխը(հեռախոսիս զանգը Ջեյմ Բրաուն ա):

Մինչև վերջ չընկալելով իրականությունը՝ ձեռս զցեցի հեռախոսին: Օնլայն հեռախոսալարի մյուս ծայրում գտնվող հորթային բովանդակությամբ բասը՝ Ամերիկյան հայտնագործելու գիտակցությունից արբած հույժ կարևոր տոնով հաղորդեց, որ գիտակցում ա անպատեհ ժամին իր գոյության մասին իմաց տալը:

Ականջներիս չհավատացի: Ի՞նչ:

-Ես գիտեմ, որ շատ ուշ ա զանգելու համար,- անկյանք ձայնով կրկնեց բասը,- բայց հո՞ չես մտածում, որ ինձ համար մեկ ա. դու տուն հասել ես, թե՛ չէ՛:

Մտածեցի, որ Տախշայի հետ մի բան նի տո ա, կամ էլ՝ էրագի մեջ ա, որովհետև վազ համաձայնվեցի հորթի այն պատճառաբանության հետ, թե ինձ ասել էր, որ տուն հասնելուն պես իրեն զանգեմ ու տեղեկացնեմ, որ իր կյանքի ամենակարևոր բաղկացուցիչը ողջ-առողջ ոտքը դրել էր տուն:

-Չեմ լսել, որ ասել ես,- համաձայնվեցի՝ չնայած լավ էլ գիտեի, որ ոչ մի տեղ խոսակցություն էլ չէր էղել,- թե չէ անպայման կզանգեի:

-Սիրոս ընկավ տեղը,- շարունակեց բարբաջել հորթը,- իսկ ես մինչև հիմա նստած թախտին՝ սպասում էի զանգի:

Ստեղ արդեն չդիմացա ու թռա դեմքին, թե ուրեմն էսքան վախտ խի՞ էր սպասում: Թե որ էդքան անհանգստանում էր, թող շուտ զանգեր: Ախր, էդքան ժամանակ՝ Տախշայի համար ահագին թանկ հորթի սիրտը տազնապահար ա եղել ու ո՞վ գիտի, թե հետագայում դա ոնց ա ազդելու նրա ցլային առողջության վրա:

-Ես սպասում էի, որ դու զանգես,- հորթային համառությամբ կրկնեց նա՝ ակնարկելով, որ իրա ուշադրության հորիզոնում հայտնված մի մեկն էնքան քթի ծակ պետք ա ունենար, որ ջոկած լիներ, թե նման տարրական դեպքերում ինչպես պետք ա իրեն պահի այդ մեկը:

Բայց Տաիշայի տանձին էլ չէր: Ինքը տուն մտած թե չէ՝ մյուս ոտն արդեն տեղաշարում էր: Տաիշան ազատ թռչուն էր ու ապրում էր տանձն ավելորդ ու ոչ պետքական բաներով չճանրաբեռնելու գաղափարական վիճակով: Ինչպես ընդամենը օրեր առաջ պարզեցի. դա կոչվում ա պոֆիգիզմ:

Հորթը՝ ջոկելով, որ ցանկություն չունեմ երկար շարունակելու էդ անհասկանալի խոսակցությունը, հարցրեց, թե արդյոք ուզում եմ, որ մարշը նվագի:

-Ըհը՛,- վրա տվի ես: Ու սա սկսեց հեռախոսի մեջից մարշ նվագել- տու տու տու-տուրու, տուտուրուրուրու....

Հեռախոսը թողել էի մյուս սենյակում, ու, երբ զանգը լսել՝ տհենց կիսատկլոր հելել ու առանց լույսը վառելու՝ ձեռներս առաջ տնկած լուսնոտի պես վազել էի կողի սենյակ: Տաիշան մրսում էր, իսկ հեռախոսի մյուս ծայրից լսվում էր շվշվոցով մարշը:

Պատուհանից չերևացող լուսնի լույսն ընկել էր Տաիշայի սենյակը ու սկի չէր էլ լուսավորում: Տունը ցուրտ էր, ու սեղանին հենված կիսակծկված Տաիշան լավ չէր կարողանում ըմբռնել իրավիճակը: Դրությունը շատ հիմար էր ու Տաիշային ծանոթ ոչ մի կանոնների մեջ էլ չէր տեղավորվում: Դրանից ինքը ապուշ էր կտրել ու չգիտեր անելիքը:

Հեռախոսի մյուս ծայրում մարշն ավարտվեց, ու հորթն ասաց. «Ըհը, մա՞րշ էիր ուզում, էս էլ քեզ մարշ»:

Մի քանի ժամ առաջ ծանոթացած հորթի ձայնի մեջ Տաիշան առաջին անգամ հուզմունքի նոտաներ որսաց ու գնահատեց պահի կարևորությունը: Հորթը՝ ուղիղ 4.8 րոպե բարբաջելուց հետո, հանգել էր էն կարևորագույն մտքին, որ ես պետք է ապրեմ ու իր թույլտվությունը տալով՝ բարի գիշեր մաղթեց: Ես տեղում հանգա: Ժամը 3.48 րոպե էր:

Կամայուծերի էկրանից դեբիլի կեցվածքով ու տպոյ բովանդակությամբ մի սֆաթ պլշվել էր ուղիղ Տաիշայի վրա: Դեբիլությունն էնքան ակնհայտ ու անվիճարկելի էր, որ չփորձեցի անգամ ինչ-որ տվյալներ ճշտել: Ինձ համար էդ փակված թեմա էր ու այդ մասին շատ շուտ մոռացա:

Պարզվում ա, որ գրիչս գնահատողները շատանում են: Հա՛: Ուրեմն, ընթերցողներս շատանում են ու օրը մեկն սկսել ա Տաիշային հայտնագործել:

Հա՛: Ուրեմն, սքանչելի եմ գրում... պարզվում ա... հատկապես բլոգումս.... Դե սալութ՝ սալութ: Պատիվ ունեցանք հարգանք վայելելու:

Տախշան շատ ա սիրում բառերով խմոր անել: Սենց սա՛ղ օրը խփում ա, խփում ա, աջ ու ձախ ա տալիս, գրտնակով բացում ու փակում ա, բացում ու փակում ա, հետո էլ սկսում ա նեյնիկ-նեյնիկ շարել:

Բայց մի բան նի տո էր: Չէ՛: Ամենավաղանցուկ միտքն անգամ հնազանդվում է անտեսանելի մի գծագրության և կարող է թագադրել կամ կամ սկզբնավորել գաղտնի մի ձև: Չէ՛: Էս Տախշան չնոգոնեց: Էս Բորխես ա: Ես ուրիշ ձև կգրեի:

«Ժամանակը հավերժորեն բաժանվում է դեպի անհամար ապագաների»։ Բորխես: «Դրանցից մեկում ես երագել եմ նրան»։ Տախշա:

Այդ ապագաներից մեկն անցյալում՝ մի կլորակի տեսքով կանգնել էր Տախշայի առաջ ու սառը ժպտով նայում էր նրա ճակատին:

Խաչմերուկի անկյունում կանգնած կլորակը կտրեց Տախշայի ճանապարհն ու ներկայացավ. «Ես ռոմանտիկ- պոֆիզիստ եմ: Ավելի պարզ. մարդ եմ երկու ձեռքով ու մեկ զույգ ոտքերով: Ունեմ նույնքան ականջ, մի այդքան էլ աչք, որոնց մեջտեղում բիբլիական ծավալով բազմել է միայնակ քիթը»:

Նա բնութագրեց Տախշային որպես պոֆիզիզմը գաղափարական հենքի վրա դնող մի մեկը, որը կյանքում մի շատ սովորական քաղքենի ա ու մնացած քաղքենիներից տարբերվում ա կյանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքը տեսական պոֆիզիզմի վերածելու ունակությամբ, պրիչյոմ դրա մեջ կա հսկայական զազոր, որի արանքում ինքն արձանագրել էր Տախշայի հոգու տվայտանքների ողջ ներկայակն ու կամացից տեսնում էր ռոմանտիզմից պոֆիզիզմ տանող ճանապարհի յուրաքանչյուր կանգառը:

Տախշան, բնականաբար, էս բարբաջանքից զադ չէր հասկանում ու ապուշ ժպտում էր կլորակի երեսին: Ինքը փորձում էր հասկանալ, թե ում հետ գործ ունի:

Սենք նստած էինք դեմ դիմաց ու ուսումնասիրում էինք միմյանց: Բնությունն անխոս, նրան օժտել էր մասսայի մեջ թաքուն գործելու ու աննկատ մնալու բացառիկ մենաշնորհով: Հորթը անգույն ու ոչնչով աչքի չընկնող մի մարդ էր ու այդ հատկության շնորհիվ, կամ ավելի շուտ այդ դիմակի տակ անում էր էն, ինչը չէր անի հույժ ծանրակշիռ արտաքինով ու իր մտքի թռիչքին չնվաճված բարձունքներ վերագրած մի մեկը, ում չափազանց ինտելեկտուալ ու խորիմաստ հայացքով դեմքի տակ, իրականում, թաքնված է միջակությունը:

Մեծագույն ցանկության դեպքում անգամ՝ դժվար էր հորթի դեմքին գտնել ինտելեկտի կամ մտավոր զարգացվածության հետ գոնե հեռավոր կապ: Նա՛ կոլոտ,

կլորոտ չափսերով ու նույն կլորակին համահունչ կլոր գլխով ու հորթային հայացքով մի մեկն էր, որ կարթը զցել էր ջուրն ու հանել Տաիշային:

Տաիշայի լատարեն շահել էր: Պարզվեց՝ հորթը ոսկի ջիգյար ունի: Բայց էդ շատ մեծ ու վիճահարույց հարց էր: Դե է՛ն էլի, թե ում բախտն էր բերել. հորթի, թե՞ Տաիշայի: Որովհետև Տաիշայի տեսակը շատ վաղուց հանգրվանել էր Կարմիր գրքում: Ու թեպետ հորթը գիտեր, որ մարդկային այդ տեսակի գոյությունը տեսականորեն, տակավին, պետք է, որ պահպանված լիներ, սակայն երբեք էլ չէր կասկածում, որ այն Տաիշայի տեսքով կգա ու իրա ոտով կծեծի դուռը:

Դուռը բացեց ինքը:

-Մենք ծանոթ ենք,- զարմացած հարցրեց անծանոթը:

-Ոչ, բայց միթե՞ ընկերություն անելու համար դա պարտադիր է,- անվրդով հարցրեց Տաիշան, ում տանձին էլ չէր, թե ով կբացի դուռը:

Տաիշային պետք էր մի մեկը ու ոչ միայն կոնկրետ այդ մեկը: Իրան պետք էին լիքը այդպիսի մեկեր, որովհետև ընդհանուր հանրույթում՝ ամբոխի բզզոցի մեջ, ավելի հանգիստ էր աննկատ մնալ ու գործն առաջ տանել, քան թե ունենալ մի երկու- երեք, կամ մաքսիմում տասը ընկերներ ու հայտնվել նրանց ուշադրության կենտրոնում:

Իսկ Տաիշան, ընդհանրապես ասած, ոչ մի գործ էլ չէր անում: Ինքն ուղղակի իրա համար ապրում էր: Ոնց որ բոլորը: Գնում էր գործի: Ոնց որ բոլորը: Ուտում էր: Քնում: Միգուցե մի քիչ ավելի շատ, քան բոլորը: Որովհետև ինքը շատ էր սիրում քնել: Մի խոսքով: Տաիշան իրա լմանիկներից, այսինքն մարդկային արարածներից՝ տարբերվում էր մարդկային վարքին հարիր բոլոր գործողությունների՝ միայն Տաիշային հատուկ որոշակի մի խմբի նկատմամբ ունեցած հակումներով: Եվ ընդամենը:

Բայց վայր-տակի՝ ինքն ինչ-որ պլաներով ավելի էր տարբերվում մնացածներից, քան թե մնացածներն՝ իրարից:

Ու ոսկի ջիգյարով հորթն էդ ամեն ինչը հասկանում էր Տաիշայից լավ:

Տաիշան երբեք անկապ դռներ չի ծեծում ու չգիտեր, թե ինչու էր ծեծել այդ դուռը: Երկար մտածելուց հետո նա՝ չկարողանալով գտնել դրա համար որևէ բացատրություն, հիմք ընդունեց դռան գոյությունը որպես սկզբնակետ: Դե՛ կետերը տարածության մեջ անվերջություն են կազմում, ու նույնիսկ տեսականորեն էլ հնարավոր չի ֆիքսել տարածության կոնկրետ կետում՝ ժամանակի կոնկրետ պահը, երբ Տաիշայի ու ոսկե ջիգյարով հորթի մտադրությունները՝ աչքի համար անտեսանելի մտքի թելերի տեսքով երբ թափառում էին տիեզերքի քառսում, ապագայում կամ անցյալում նախագծված ցրցամի արդյունքում խաչվել էին իրար:

Քյասար՝ առանց ֆիզիկայի յուլա չի լինում էթալ: Ոնց հասկացա: Որովհետև էսի հենց Հայզենբերգի Անորոշությունների առնչություններն ա որ կա: Դե է՛ն էլի, որ ժամանակի կոնկրետ պահին՝ տարածության կոնկրետ կետում՝ ամենաբարդ ու մարդկության նորագույն մտքի արդյունքում ծնված ոչ մի մեթոդով էլ հնարավոր չի կոնկրետ ֆիքսել այդ երկու պարամետրերի կոնկրետ արժեքը:

Ժամանակի պահը լրիվ կոնկրետացնելուց կոորդինատը համբուրում և անորոշությունների թուշը և հակառակը: Ինչ-որ արդյունքի մասին խոսելու համար պետք է հաշվարկել մասնիկի, այսինքն Տաիշայի ու ոսկե ջիգյարով հորթի միասնական մտքերի՝ իրար հետ հանդիպման սկզբնակետի ընտրության հավանականության մասին:

Ու ես որոշեցի տանձս շատ չծանրաբեռնեմ ու ընտրեմ միջին մի կետ: Ավելի կոնկրետ էն պահը, երբ անհայտ պատճառով ծեծել էի անծանոթի դուռը:

Հա: Ինչ էի ուզում ասեմ: Դե հե՛ջ, առանձնապես: Մի փոքր բարբաջեմ: Չգիտեմ խի որոշել եմ, որ դրա իրավունքն ունեմ: Հատկապես, որ տեղովս բնածին չարության առանձնապես մեծ չափաքանակի դոզաների շտեմարան եմ ու դեռ ջանքեր եմ գործադրում այն արհեստականորեն մեծացնել կամ ավելի ճիշտ՝ ուռձացնել:

Հա: Չմոռանամ: Խոսքն էսօր Տաիշայի մասին և: Ավելի ճիշտ՝ էն մասին, թե ինչից և սարքված Տաիշան: Իսկ Տաիշան տեղով զակատած կռիվ և, որի կռիշկեն ես շատ պինդ փակել եմ: Բայց դե Տաիշան հենց նրանով և Տաիշա, որ թքած ունի ավամ աշխարհի ու հենց իրա վրա: Ու, երբ որ վախտը գալիս և. իրան մի հատ նենց և թափ տալիս, որ ի՞նչ կռիշկա-այան, ինչ ծակ մեշոկ, ինչ տաս կոպեկ: Մեջի գազերը սենց եռ են գալիս, եռ են տալիս ու ներքին ճնշումից մի հատ նենց թափով են խփում, որ կռիշկեն չթոցնելու համար մի աժդահա հորթ և պետք, որ դեմն առնի:

Բայց դե էդ էլ չի փրկի: Վախտը որ գա, էդ ներքին կոնֆլիկտ-այան-մյան, կամ ուրիշ խոսքով Տաիշայի բոբոյությունը որ բռնում և, թե որ բանկի բերանը փակ ըլնի, իրան բանկի մեջ նենց պատեպատ կտա, որ մեջինը բերանից դուրս չգալու տեղը կխփի կողերին ու բանկեն ճաք կտա: Ու էդ ճաքերից կարող և բանկեն ջարդվի ու Տաիշան ճանապարհ ընկնի դեպի անսահմանություն: Ուրիշ խոսքով՝ պառկի սև դագաղի մեջ: Հա: Ես պահը կարևոր և: Դագաղը պիտի սև ըլնի:

Հա: Չմոռանամ: Տաիշան դաժե զակատած կռիվ չի: Ինքը քայլող պրոբլեմ և: Ու հենց ձեռի հետ էլ կարող և կռիշկեն թոցնի ու մեջի կեղտը ցակոնի կողերը:

Հա: Ուրեմն հրաբուխի դայրա բռնկված Տաիշան էն օրը տեղում տրաքվեց ու մեջի ցեխը թռավ ու կպավ իրա ճամփին միամիտ հայտնված հորթի բերնին:

Նա մի հորթ էր, որ շատ բան էր տեսել ու շատ բան՝ լսել: Հորթ, որ եկար ժամանակ դռերում ու քաչալ սարերում անհամ ու անհոտ խոտ արածելուց ու նոր կերի փնտրտությունների արդյունքում՝ ռաստվել ավափական մարգագետնի կուսական մաքրությամբ ու քաղաքի կեղտոտ օդից բնավ չաղտոտված հյութալի ու նուրբ արոտավայրի: Դրանից հորթի քիմքը մի ուրիշ տեսակ զարմացել էր ու ամբողջ երկու ամիս՝ ինքը որպես յուրահատուկ դելիկատես՝ հորթային էության գոյության համար անհրաժեշտ կոպիտ կերակուրներով սնվելուց հետո, վայելում էր Տաիշային:

Գիշեր էր: Արարատյան դաշտավայրի ամենասովորական գիշերներից մեկը: Խաչմերուկում Տաիշայի դեմ դիմաց հայտնված կլորակը անկյանք ժպտաց նրան, իսկ Տաիշայի տանձին էլ չէր:

Ժամանակը հավերժորեն բաժանվում է անհամար ապագաների: Նրանցից մեկում Տախան երագել էր նրան:

Խաչմերուկում կանգնած Տախան շփոթվելուց ու չիմանալուց, թե ինչ անի. ձեռները մտցրեց վերարկուի գրպանն ու գտավ 300 դրամ: Էդ օրը ցուրտ էր, ու ինքը հագել էր վերարկու, որն արդեն 15 օր կախված էր գարդիրոփում: Պարզվեց. գրպանում 300 դրամ կար: Դա ճիշտ այնքան փող էր, ինչքան պահանջվել էր ապագայի անցյալից՝ ներկայի կոնկրետ այդ կետը հասնելու համար:

300 դրամ: Դա Տախային լավ նախանշան թվաց: Հարցը փողը չէր: Ուղղակի ինքը սիրում էր ամեն ինչի մեջ նշաններ փնտրել ու մեկնաբանել: Բայց էս ամենը հենց նոր մոզոնեցի: Էն ժամանակ էդ մասին բոլորովին էլ չմտածեցի: Ես պարզապես գտել էի 300 դրամը: Սակայն ի՞նչ տարբերություն: Ապագայում ցրցամ տված միտքը միշտ էլ կարելի է պրոյեկտել անցյալի կատարված գործողության վրա ու դրանից նոր արդյունքներ ստանալ ներկայում: 300 դրամ: Հարցը փողը չէր: Տախայի համար փողը երբեք էլ հարց չէր էղել, չնայած որ իրա գիտակցական կյանքի մեծ մասում կոպեկին կակա էր ասել:

Հա: Չմոռանանք: Ցակոնված Տախայից մի կտոր թռել ու կպել էր հորթիս ամենացավոտ տեղին ու դրանից իրա սիրտը առել էր: Ո՞վ եմ ես: Այսինքն Տախա կոչեցյալս: Որ այդչափ կենտրոնացել եմ դեբիլի կեցվածքով ու տալոյ բովանդակությամբ սֆաթի վրա ու փորձել հասկանալ կլորակի եզրույթով սահմանափակված հորթային բովանդակությունը, հատկապես, երբ գեղեցկության մրցույթում հաղթողի մոդելի կողմից չէր տրված գնահատականը:

Տպավորություն էր, որ հորթը չէր արդարացրել Տախայի սպասումներն ու բռնաբարության ԱՆՀԱԶՈՂ փորձը ավարտին չէր հասցրել:

Տախային, հատկապես, գրավել էր հորթի այն դիտարկումը, որ, թեպետ մինչ այդ օրը նա հասարակական վայրերում ոչ ոքի հոշոտած չկար, դա երբեք էլ չէր ենթադրում, որ նման ցանկություն չի եղել: Ու իմանալով, որ ոչ հասարակական վայրերում հոշոտելը նույնիսկ պարտադիր պայման է, չափազանց վշտացավ, որ հորթը չուզեց քայլել, այլ նրան ձեռքերի վրա տարավ Թումանյանի Ջազվե:

Տախան էլ դրանից կատաղել ու անմիջապես դրա էֆեկտի ազդեցության տակ ցխվել էր: Որովհետև ինքը հույս ուներ, որ քայլելու ընթացքում ինքը՝ որպես նենգ մտքերի սկզբնաղբյուր հանդիսացող փորձառու չարամիտ, կմոլորեցներ ոսկի ջիգյարով հորթին ու կտաներ մի մութ տեղ, որտեղ էլ օգտվելով Տախայի նկատմամբ տածած հորթի վստահությունից՝ ԿԲՈՆԱԲԱՐԵՐ նրան: Տախան՝ հորթին: Կամ հակառակը: Էդ չէր կարևորը, այլ երևույթը: Կամ ավելի ճիշտ՝ Տախայի սպասումները:

Բայց...ինքը, փաստորեն, նույնիսկ բավականին բարեհամբույր ու սիրալիր էր գտվել... Մի խոսքով, կարող եմ գրել, ինչ ուզում եմ: Դա պարզապես դիտարկում էր.....

Խաչմերուկի անկյունում կանգնած՝ կլորակի եզրույթով սահմանափակված դեբիլի կեցվածքն իրականում դիմակ էր: Կլորակի եզրույթով սահմանափակված բովանդակությունը սկի հորթային էլ չէր: Ու Տախան էդ ամենասկզբից էլ ջոկել էր:

Տախշան հավատում էր ժամանակի անսահման շարքերի գոյությանը: Հատվող, համբուրվող, իրար ատող, բայց միմյանց ձգող ու բազմազարմազան այլ բնույթի հարաբերությունների մեջ գտնվող ժամանակային այս հանգույցներն ընդգրկում են մարդկային մտքի ճախրանքին հարիր բոլոր հնարավոր ու անհնար տարբերակները: Էս կոչվում է բորխեսաված Տախշա: Այսինքն Բորխեսսի ու Տախշայի փոխադարձ սիրուց երկունքված մի այսան:

Ժամանակների մեծամասնությունում մենք գոյություն չունեինք, մի մեկի մեջ գոյություն ունեիր դու, մյուսում՝ ես, երրորդում՝ երկուսս միասին...

Ժամանակներից մեկում՝ Տախշան հորթի հետ կանգնած էր անվերջ շարքերից չորսի հատման խաչմերուկում ու շփոթված նայում էր ոսկե ջիգյարով հորթի երեսին:

Մյուսում՝ բորխությունից չարացած ու բբռեջ մազերը չորս օր չսանրած Տախշան ցբխվել էր ալամ աշխարհով մեկ ու այդ պահին զբաղված էր ցակոնված կտորներն ի մի բերելով ու ինքնությունը վերականգնելով:

Դրան զուգահեռ ժամանակային երրորդ տիրույթում ես՝ կամայուծերիս առաջ նստած պոստում էի, երբ ականջս միամիտ առավ նույն ժամանակների դեմքին ու բովանդակությանը բնավ ոչ հարիր խոսակցությունից մի փոքրիկ հատված:

-Սև դագաղի մեջ պառկած կինը ինչ-որ մռայլ ու չարագույժ տրամադրություն հուշեց...բաղնիքի այրված լամպը որ մոռանում էիր փոխել, ավելի թեթև էր...

Ի՞նչ:

Տախշան ականջներին չհավատաց: Մտքի արագությունից էլ արագ սուրալով նրա առաջ էկավ ու տուտժե վեր հառնեց օրեր առաջ կամայուծերի էկրանից պլշված՝ դեբիլի կեցվածքով ու հորթային բովանդակությամբ հավերժորեն մոռացված սֆաթը: Նման դեպքերում Տախշան իրան չի կորցնում: Հանգիստ ու անշտապ շարժումներով նա հիշողության մեջ վերականգնեց անհուսալի որակված սֆաթի դեմքի ամենամանրամասն դետալները: Ինչ-որ մի այսան ստեղ նի տո էր:

-Էդ սֆաթի գլխում էդ որակի միտք չէր կարա ծնվեր,- պոստելով միտք էր անում Տախշան ու էդ մտքերը՝ միքսվելով այդ ժամանակի ամբողջությունում, սահուն անցում էին կատարում դեպի մյուսը:

Մյուսում Տախշան Թումանյանի Ջազվեում նստած՝ հռռում էր ու իրա տանձին էլ չէր, թե իրան զուգահեռ մի այլ ժամանակում Տախշան ինչ էր մտածում Ջազվեոտ ու ոսկի ջիգյար ունեցող հորթի մասին:

Տախշան այնտեղ մանթո էր ընկել ու հիշելով, որ մի ժամանակ մանթո բառը հայերենում թարգմանված էր որպես հոգեբանական անբացատրելի վիճակ, հակառակը ապացուցելու համար՝ անձնական օգտագործման ու կառավարության համապատասխան որոշմամբ անհատույց կերպով իրեն օտարված Օլիմպոսի գագաթից վերամբարձ տոնով զրից էր տալիս սֆաթի հետ:

-Հանկարծ չմերժես, թե չէ հաջորդ հողվածդ կգրես Կիւլյանից ինքզինքին ցած նետած երիտասարդի մասին, ու սրտի կսկիծով կակնարկես, որ դրանում քո լուծման բավականին մեծ է եղել...

Էս Տաիշայի մտքերն էին, որոնց հեղինակը ինքը չէր: Այսինքն ինքը հենց տենց էլ կգրեր: Դաժե սպիտակ ձիու վրա նստած ասպետին սֆաթը անվանել էր ասպո, ու չնայած Տաիշուկը երբեք ասպետին ասպո չէր ասել, բայց նույն պահին զգաց, որ էդ բառի ընկալման հետ ոչ մի խնդիր չունի ու տուտժե սիրեց ասպետի ասպո տեսակը:

-Մյուս ռեսին, երբ որ նույն կամ մի ուրիշ տեղում ծնվեմ՝ ասպետին հաստատ ասպո կասեմ,- մտածում էր ասպուշ կտրած Տաիշան ու շարունակում վերամբարձ տոնի խոսակցությունը:

Անհամապատասխանությունն էնքան մեծ էր, որ Տաիշայի գլխի ճիճիկները խառնվել, իսկ դրանցից էրկուսը հակառակ կողմերից դուրս էին եկել, աճող պարաբոլի տեսքով բարձրացել էին ականջներից վեր, ու գլխից ուղիղ 20 սմ վերև հատվածում ձկվելով իրար կողմ՝ երկար ու ինքնամոռաց համբուրվում էին: Ուրիշ խոսքով Տաիշայի ֆազերը խփել էր:

Ու դա էյնշտեյնի հարաբերականության տեսության հետ ոչ մի կապ չունի: Որովհետև էդ շատ վաղուց էր, որ Տաիշան գլուխ էր հանում Մաքսվելի հավասարումներից կամ Ֆերմայի թեորեմից: Ինքը հիմա նույնիսկ չի էլ հիշում Լայպցիգին կամ էլ Մայթելսոն-Մորլիի փորձերը: Ինքը դաժե չգիտեր էլ, որ Նիլս Բորը ֆուտբոլիստ ա եղել կամ ամնվազն ֆուտբոլի հետ որոշակի ու կոնկրետ կապ ա ունեցել:

Տաիշան ուզում էր թքեր սաղի ու ալամ աշխարհի վրա, ժամերով նստեր կամայուծերի առաջ ու բառերի հետ խաղ աներ: Ինքը սիրում ա բառերի հետ պախկվոցի խաղալ: Ավելի ճիշտ՝ բառերի հետ չէ: Ու ավելի ճիշտ՝ պախկվոցի չէ: Ինքը ուղղակի սիրում ա հավաքել բառերի կամայական կոմբինացիա ու դրանից կերտել մտքեր: Թե ոնց կստացվի՝ կարևոր չի: Նկատի չունեմ՝ բովանդակությունը: Բովանդակությունն էլ հետը: Ժամանակի ու տարածության արանքներում՝ Տաիշան բառերի կոմբինացիաներն ընտրելուց սկի չէր էլ մտածում, թե վերջն ինչ ա լինելու կամ ոնց սկսի ու ինչն ինչից հետո դնի:

Ամեն ինչ կախված էր հաշվարկման համակարգից: Նկատի ունեմ պատմությունը հորինելու կերպը: Տաիշան միայն հիշում էր, որ էդ դասի ժամանակ ինքը բացառման մեթոդով լուծել էր խնդիրը, ու առանց իմանալու, որ սույն անալիտիկ մտածողությունը վայել է ֆիզիկին, դասատուին պատճառել էր հրձվանքի ու զարմանքի կլոր 48 վայրկյան:

Բախչի կողերով ֆռֆռացող Նյուտոնի գլխին երբ ընկավ խնձորը, իրա մտքով սկի չէր էլ անցնում, որ նույն խնձորի կարմիր տեսակը տարածության մի այլ կետում կարա մարդափոր թափելու պատճառ կամ կույս լինել-չլինելու վիճակը բնութագրող խորհրդանիշ լիներ: Դա Նյուտոնի տանձին էլ չէր: Ինչպես նաև էն, որ իրանից մի եքա վախտ հետո մի հրեա ստեղծելու էր ավելի գլոբալ մի պլան, որից ածանցված

համարվող իրա օրենքները կրկին ու կրկին շճմացնելու էին մարդկությանը: Այդ նույն խնձորը միշտ էլ ընկել ու մինչև հիմա էլ շարունակում է ընկնել իրար զուգահեռ կամ չհատվող ժամանակների տարբեր կետերում: Այդ ժամանակներից մեկում մարդկային միտքը Նյուտոնի տեսքով հանկարծ ֆիքսեց օրենքը:

Պատահականությունները հայտնվում են այնտեղ, որտեղ դրա համար պարարտ հող կա:

Կլարան մեծ Տաիշային ասում էր, որ եթե բոստանի շուրջ բոլորը քարերով դեկորացիա սարքող մի մեկն օժտված լինի որոշակի էներգիայով, ապա նա կարող է առանց մտածելու շարել այդ նույն քարերը՝ առանց մտահոգվելու թե որը որտեղ կամ ինչի հետ դնի: Նա կարող է ընտրել քարերի ցանկացած կոմբինացիա ու ձևավորել՝ ոնց խելքին բողի: Ու բոլոր դեպքերում էլ կստացվի անկրկնելի ու շատ զարմանալու մի արդյունք, որը մարդիկ որակել են որպես արվեստի ստեղծագործություն ու դարերով գլուխ են ջարդում, թե ինչու է հեղինակն ընտրել գույնի այդ երանգը կամ ոնց ա որոշել, թե նկարի որ մասում այն դնի:

Մարդիկ դրա անունը դրել են արվեստ, իսկ այն մոգոնողին ստեղծագործող ու հնարել են մարդկային միտքն ընդգրկող բոլոր սֆերաներին վերաբերող բազմազարմազան կլասիֆիկացիաներ, այդ գործով զբաղվող արհեստավարժ ու դրանց հետ սկի կապ էլ չունեցող չմասնագետներ, կառույցներ ու այլ զրթուզիբիլներ, որպեսզի վերլուծեն, պահպանեն ու սերունդներին փոխանցեն մուտիլովչիկի հնարած կիքսերը՝ ոսկե հորթի ջիգյարի իսկության կամ Նյուտոնի խնձորի մասին:

Իսկ բառերի, քարերի, գույների կամ քարերի խաղացողների տանձին էլ չի, թե ով ինչ կմտածի իրանից հետո: Ինքը զգում է մղումը. ահա թե ինչ պետք է անել: Իսկ մղումները կարող են ծնվել երբ ասես ու ոնց ասես: Դա կարող է ֆռռալ սև դագաղի մեջ պառկած կնոջ կամ պատի մեջ խրված մեխի կողերը: Գրում ես բառը, այսինքն բառերը, իրանք ձևավորում են բառերի կոմբինացիա: Եթե ունես էներգիա, ապա կարևոր չի, թե որ միտքը՝ երբ ու որ բառի կողը կդնես: Կամ ինչ էիր ուզում գրել: Բառերը կուղղորդում են մտքի հունը:

Այդ հուններից մեկում ոսկի ջիգյարով հորթը դեբիլի կեցվածքով ու տպոյ բովանդակությամբ սֆաթ էր, մյուսում՝ գաղտնիք:

Ժամանակը հավերժորեն բաժանվում է անհամար ապագաների: Նրանցից ոչ մեկում էլ ես նրան չեմ երագել:

Մտքերը գյուլ էին տվել Տաիշայի գլխում ու ինքը ժամանակ ու էներգիա չէր գտնում դրանք երևակելու: Դրանից մտքերի գետը վարարել, հունից դուրս էր էլել ու ավերել ճամփին ռաստ էկած ամեն այան: Հունը էլ հուն չէր:

Տաիշայի մտքերը շեղվել էին մտածողության սովորական ընթացքից, դրանցից շատերը՝ առանց երևակվելու՝ անվերադարձ կորում էին մտքային ալիքների

հորձանուտներում, շատերը պահ էին մտնում, որ հասունանալուց հետո դառնային ինքնուրույն պոստ, կամ էլ լրացնեին հին պոստերից մեկը:

Տախչայի մտքերը նրա գլխում հերթ էին կանգնել ու կռիվ էին տալիս, թե ով պիտի առաջինը դուրս պրծնի գերեվարությունից: Փաստորեն, Տախչան բռնակալ էր, որ իմ հոգում բանտարկել էր մտքերս, դրանից հոգիս քանդրտվել էր, ու ես՝ առաջնահերթության սկզբունքով, բարերարի մատն ուղղեցի դեպի կինո Մոսկվայի կողի յուղոտ կտորը, թու՛, ուզում էի ասել, ընտրեցի մտքերիս ֆլուկտուացիայի վերին գագաթներից մեկը, որը հերթից դուրս պրծավ լրիվ պատահականության արդյունքում:

Իրան, այսինքն բլոգիս, հատկացրել էի չորրորդ կարգի տեղ: Բայց վայր ժե տեղ տվել էի, որովհետև ինքը հորինվածքիս գործող անձերից մեկն էր: Դեռ ավելին: Միջոց, միջնորդ, բարեխոս, կավատ. ուրիշ ո՞նց ասեմ: Քյասար ոչ պակաս կարևոր անձ, քան ինքը Տախչան էր:

Բլոգս մտել էր իմ ու հորթիս արանքը ու մեզ խանգարում էր: Հա՞ որ: Խանգարում էր: Չգիտեմ: Ու չեմ էլ ուզում իմանամ: Ուրիշ խոսքով էտի Տախչայի տանձին էլ չէր: Ինքը զգում ա ներքին մղման ուժը. ահա թե ինչ պետք է գրել: Ոտքերը իրան-իրան բռնում են կամայուծեր տանող նեղ ու անանցանելի կածանը, հետո մատները սկսում են թռչկոտել կլավիատուրայի վրա: Մտքերը չեն ընտրվում առաջնահերթության սկզբունքով: Տախչային ոչ մի յուղոտ պատառ էլ պետք չի: Ինքը մի քանի բոպե անկապ ֆռֆռում ա սարդոստայնի՝ իրան լավ ծանոթ անկյունիկներում, մեկ էլ հանկարծ մի անկապ տեղից մի չսպասված միտք պլո՛նոմ դուրս ա թռնում Տախչայի գլխիկից ու բառերն սկսում են անկապ սկզբունքով ընտրվել:

Էսօր ես ուզում էի գրել հորթիս ու Թումանյանի Ջազվեի մասին: Բայց բլոգս ինձնից առաջ ընկավ ու Մաքսիմիլիան Ռոբեսպիերը մնաց դեռևս սպասող կառավարան տանող ճանապարհի փշալարին:

Բլոգս դարձել էր կյանքիս մի մասն ու, ակնհայտորեն, որոշակի ազդեցություն էր թողնում դրա վրա: Տախչան ջնջել էր կյանքի ու բլոգի միջև սահմաններն, ու բլոգն ուղղորդում էր Տախչայի կյանքը: Բլոգից ածանցված փոխվում էր Տախչայի կյանքն ու դա էլ իր հերթին հետ էր գալիս բլոգ:

Տախչան ջնջել էր կյանքի ու բլոգի միջև սահմանները: Տախչան չգիտեր. բլո՞գն ա իրա կյանքում, թե կյանքը՝ բլոգում: Բայց էդ Տախչային սկի չէր էլ հուզում: Դա Տախչայի տանձին էլ չէր:

Ես էսօր ուզում էի գրել հորթիս ու Թումանյանի Ջազվեի մասին, բայց բլոգս լաչառություն արեց ու առաջ ընկավ:

Բլոգս նման էր մեծամիտ, փքված ու իրա տանձի մասին մի ուրիշ տեսակ կարծիք ունեցող մի մեկի, որը իրավացի լինելու գիտակցությամբ թքած ուներ ալամ աշխարհի ու հենց իմ վրա: Ինքը սովոր չէր լինելու երկրորդը: Բլոգս միշտ առաջին տեղում էր ու միշտ ճիշտ, դաժե եթե պետք էլ չէր:

Բլոգս կարար քաշվեր դրաղ ու լիներ դիտողի դերում, հետո կամացից կատարեր իրա դերը: Օ՛, ոչ: Ինչպե՞ս կարելի է: Բլոգս սովոր չէր նման պահելաձևի: Ինքը

իրան պահում էր աքլորի պես: Հա՛, հա՛: Հե՛նց աքլորի պես: Ինքը միշտ ճիշտ ա ու մեջ ա ընկնում ամեն տեղ, որտեղ դաժե պետք չի:

Բլոգս արտացոլում էր ներքին էությունս: Բառերը, մտքերը. դրանք սկի պատահական էլ չեն: Մարդու ներքինը գրած ա ճակատին: Տվյալ դեպքում ճակատը բլոգն ա:

Ու էսօր ես տենց էլ չգրեցի հորթիս ու Թունանյանի Ջազվեի մասին:

Ժամանակը հավերժորեն բաժանվում կամ չի բաժանվում անհամար ապագաների: Դա հեջ էլ կարևոր չի: Դրանցից մեկում Տաիշան կարար գտներ իրա փայ հորթին: Մյուսում գտել էր: Կամ էլ չէր գտել: Դա հեջ կարևոր չէր:

Չկերված սիսեռի հատիկը լքված լինելու անմխիթար տեսքով մնացել էր տալերկի ուղիղ մեջտեղում ու նայում էր Տաիշայի ճակատին: Տաիշան սիսեռ շատ ա սիրում: Ինքը սիրում ա սիսեռին ատամով լղձելու զգացողությունը:

Սիսեռահատիկը նրան միշտ հիշեցնում էր փոքր վախտվա իր կարդացած հեքիաթներից մեկը, երբ անկապ մի տեղ հայտնված արքայադստեր իսկությունը ստուգելու համար յոթ դոշակ-յորդանի տակ սիսեռահատիկ են դնում, ու առավոտը արքայադստեր կողը կապտած ա լինում, որովհետև յոթ յորդան-դոշակի տակից էլ նրա կողը ֆիքսել էր սիսեռահատիկի ներկայությունը:

Տաիշան էդ օրը արքայադուստր էր:

Նա հայտնվեց ոչ մի տեղից ու ներկայացավ: Տաիշան ամոթխած ժպտաց: Խոսքերն ավելորդ էին: Նրանք միմյանց հասկանում էին:

Տալերկի մեջ մնացած չկերված սիսեռահատիկը Տաիշային հիշացնում էր նաև հացի փշրանքները, որ մնում էին նրա տեղաշորի մեջ հաց ուտելուց հետո: Ինքը սիրում էր գիշերները հաց կրծել տեղաշորի մեջ: Տաիշան ամեն ինչ չէր ուտում ու շատ անկանոն էր սնվում: Նա շատ վախտ ալարում էր ինչ-որ այան սարքեր ու կրծոտում էր ձեռի տակ ընկած ամեն մի գիբիլ: Ու շատ վախտ, երբ որ պառկում էր քնելու, մեկ էլ ստամոքսը հիշացնում էր, որ ինքը դեռ կա, ու ես ստիպված հաց ու պանիր-այան էի սլացնում տեղաշորիս մեջ: Էդ խաայաթը փոքր վախտվանից կար: Ու հացի փշուրները հլը փոքր վախտվանից նեղում ու քերում էին Տաիշուկի նուրբ մաշկը:

Ես միշտ էլ սենց էգոիստ եմ էղել, ու ինձնից, ավելի ճիշտ քթիցս էն կողմ աշխարհ չեմ տեսել: Ու ասպոյիս, կամ ավելի ճիշտ հորթիս մասին դիտավորյալ ոչ մի բան չեմ գրում: Չէ՛: Էդ էդքան էլ տենց չէր: Ուղղակի ասպոյի պահով գրելու վախտ Տաիշայի գլխում պառուզան վրա էր տալիս:

Տաիշան սիրում ա գրել: Տաիշան, որ չգրի՝ կմեռնի:

Տաիշան հուշտռիկ ա: Հուշտռիկ Տաիշա...

Ուղեղիս մեջ հնչում էր. Տաիշա՛, Տաիշա՛... Բարև՛... Ես էկա՛....

Ձայնը գալիս էր երազիս մեջից:

Այդ երազի մեջ անհուն ժամանակը հավերժորեն բաժանվում էր անհամար ապագաների: Ու ապագաներից մեկում նա գաղտնիք էր:

Գաղտնիքը երազիս պատուհանից սողոսկել էր ներս ու կանչում էր. Տախշա՛, Տախշա՛....

Երազիս մեջ նստած էի կամայուծերիս առաջ, իսկ էկրանից ինձ էր նայում անհասկանալի մի այլան: Այդ այլանը անհասկանալի ու միայն իրան հայտնի կածաններով ներթափանցել էր մեջս ու դրանից Տախշան հիվանդացել էր: Գաղտնիքը կամայուծերիս էկրանից նայում էր ու էդ հայացքի մեջ հոգեմաշ ինչ-որ այլան կար: Գաղտնիքի աչքերը թախծոտ չէին ժպտում, դրանք դաժե չէին էլ ժպտում: Ու խնդիրն էլ ստեղ հենց էն էր, որ նկարից ու հենց աչքերից զադ չէի հասկանում:

Նկարն անհասկանալիորեն ինձ ձգում էր, ու ես օրերով ֆիքսվել էի վրեն:

Բայց էդ օրը Տախշան արքայադուստր էր: Ինքը վայելում էր գաղտնիքի անմիջական ընկերակցությունն ու էտի իրա տանձին էր:

Անհուն ժամանակը հավերժորեն բաժանվում է անհամար ապագաների: Այդ ապագաներից մեկում ես երազել էի հենց նրան:

Առանձնանում եմ հորինվածքս վերջացնելու համար... Պոֆիգիզմը Տիեզերքի լաբիրինթոսներից հենց մեկն է որ կա: Խրվել եմ ու վերջը չի էլ էրևում.... էսօր կերևա....

Տախշան աշխարհը զգում էր ստոճանիով: Աշխարհը ծանրացել էր, ավելի ճիշտ մի այլան նի տո էր: Արդեն էրկու ամիս: Տախշայի ստոճանին արդեն էրկու ամիս լյավ չէր:

Տախշայի ուղեղը դատարկ էր: Պոստը, որի թեման ասպոն էր, չպետք էր գրվեր ասպոյի մասին:

Առանձնացել էի սիրտս դատարկելու համար: Ստոճանիս ցավում էր: Արդեն էրկու ամիս:

Պատմությունն այնքան հին էր, որքան մարդը: Ալամ աշխարհի կեսը տանձասեր հորթ ա, մյուս կեսը՝ տանձակիր Տախշա: Ոսկի քիզարով հորթի գլխում ՄԻԱՅՆ Տախշայի տանձն էր: Ու էդ պարզ ճշմարտությունը հասկանալու համար պետք չէր զնալ Լեննագան ու խժռել քյալլա:

Ամեն մի պոստի ամեն մի մտքում ես կարող էի հորինել բազմաթիվ ընթացքներ ու պատմությունն ուղղել այդ հունով: Մեկն ընտրելու դեպքում, մյուսը ոչնչանում էր և մնում բորտին: Միաժամանակ ես կարող էի ընտրել բազում ընթացքներ, դրանք ուղղորդել իրար հակառակ կամ զուգահեռ ուղղություններով: Այդպես են կյանքի կոչվում տարբեր մտքեր ու ստեղծվում կամ ոչնչանում մի աշխարհ գաղափարներ:

Տեսականորեն դա կոչվում է անհուն ժամանակների հավերժական բաժանում անհամար ապագաների: Դրանցից մեկում ես ու ինքն իրար չէինք էլ ճանաչում, մյուսում ասում էինք միմյանց չասելու չափ, երրորդում կռվում էինք, չորրորդում նա չկար, հինգերորդում էլ՝ ես, հաջորդում ես նրան սպանեցի, յոթում նա ոչնչացրեց ինձ իր միջամտությամբ... ութում մենք անմոռաց սիրում էինք միմյանց գիշերներ շարունակ... մյուսում բաժանվեցինք՝ այլևս իրար չտեսնելու չակնկալիքով....

Պոստը, որի թեման ասպոն էր, չպետք էր գրվեր ասպոյի մասին:

Ես ուզում էի գրել Թումանյանի Ջազվեի ու էն մասին, թե ինչքան լավ անցավ էդ 1 ժամ ու 48 րոպեն Տաիշայի համար, բայց ինքը չուզեց:

Ինքն ուղղորդում էր պոստիս ընթացքը, ու դրանից Տաիշան կատաղել էր: Ես սիրում էի գրել նենց, ոնց որ ուզում էի: Իրա ներկայությունը խանգարում էր ինձ: Ոնց որ սեր անես, ու կողից երրորդ մարդը նայի քեզ, մի հատ էլ ասի, որ անկեղծ չես սիրել... տողատակերում....

Տաիշայի ֆազերը դրանից խփել էր ու հորինվածքիս հունն էլ փոխվեց: Ի սկզբանե ոչինչ էլ չկար: Ի սկզբանե էր այսանը: Սաղ խնդիրն էն էր, որ Մաքսիմիլիան Ռոբեսպիերը մնացել էր կառավարան տանող ճանապարհի փշալարին ու սպասում էր իր հերթին, երբ որ Տաիշան ռոբեսպիավարի կասեր. «Շատ հաճելի է»: Ու տենց էլ չասեց: Դա մնաց էն հնարավոր, բայց չգրված մտքերի հորձանուտներում, որը որ կգրվի սրան զուգահեռ մի այլ ժամանակային հորինվածքում, իսկ մյուսում արդեն շատ վաղուց գրվել ու ունեցել ա իրա տրամաբանությանը հարիր այլ շարունակություն:

Հորինվածքը ռադիկալ փոխվեց, ու լիքը մտքեր տենց էլ չգրվեցին: Ոչ մեկ չի կարա ասի լավ էր դա, թե վատ: Տեքստը սա էր, ուրեմն հենց տենց էլ պիտի լիներ:

Տաիշան գժոտ ա: Ինքը փորձեց սթափ դատի, որ հասկանա, թե ինչ ա գրում: Բայց ինքը զգում ա մղումը. ահա, թե ինչ պետք ա գրել:

Տաիշա՜... Տաիշա՜.... Երազիս մեջից ոսկի ջիգյարով հորթը կանչում էր. Տաիշա՜... Տաիշա՜... բարև՜.. ես էկա՜...:

Տաիշան առանձնացել էր ողբալու ստոճանու ցավը: Տաիշան Տաիշա էր ու ի սկզբանե էր այսանը:

Տաիշան յոթ օր էր չէր սանրել մազերն ու շաբաթվա վերջում դառել էր բոբո ու բբռեջ Տաիշա:

Տախշան առանձնացել էր ողբալու ստոծանու ցավը: Ստոծանիս ցավում էր, ու շունչս չէի կարում իջացնել ներքև: Դրանից աչքերս ուռել էին, ու գիշերները չէի կարում քնել:

Փաստորեն, ինքը ճիշտ էր. ես մի սովորական քաղքենի էի, որ միայն խոսում ու գրում եմ, որ թքած ունեն ալամ աշխարհի ու հենց իմ վրա:

Տախշայի հոգին քանդորտվել էր: Ու ստեղ ոչ մի այսպիսի չէի կարում անել: Ստոծանիս ցավում էր: Դրանով էի զգում աշխարհի հետ կապը: Ինքը ստեղ ոչ մի կապ էլ չունեի: Խնդիրն իմ մեջ էր: Այն բխում էր աշխարհը տեսալու ու ընկալելու իմ կերպից:

Չկա պարտություն: Չկա հաղթանակ: Ցանկացած հաղթանակ իր մեջ կրում է պարտության նախադրյալներ ու հակառակը: Есть только жизнь, которую нужно прожить.

Տախշան երբեք չէր հասկացել, թե մարդկանց արտաքինը ոնց կարա մարդկանց կապի իրար հետ: Իրա համար կամուրջը սարքված էր լրիվ ուրիշ մատերիալից ու սավսեմ ուրիշ որակից:

Տախշան երազել էր իրա ճանապարհին անկապ հայտնված մի մեկի մասին, ով կգար ու կասեր. «բարև, ես էկա»: Ինքը փոքր վախտ տեսել էր «Ծիծաղելի աղջիկը», որտեղ հարդասենյակի դուռը ծեծում են, կաբարեի պարուհին ընկերուհիներին ասում է. «Ահավասիկ, եկել է ասպոս իմ հետևից»: Բացված դռնից ներս է մտնում ասպոս՝ մի փունջ ծաղիկով: Ու ստեղ Տախշան, այսինքն մեր ժամանակներին զուգահեռ գոտում՝ պարուհին, մանթո ա ընկնում: Եսի մենակ կինո չի: Տախշան միշտ էլ հավատացել ա հեքիաթների:

Տախշան հավատում ա, որ անհուն ժամանակների՝ հավերժորեն բաժանված ապագա ժամանակներից մի մեկում իրա դուռը կծեծի ասպոս ու ծաղիկների մեջ կլողացնի իրան.... Դա արդեն եղել է ու էլի կլինի անթիվ, անհամար ժամանակների ու տարածության ցանկացած կետում....

Նրանք կարող էին միասին քայլել անապատի ավազների մեջ ու հասնել ամպերին... շնչել Ջոնոլունգմայի օդն ու լողալ օվկիանոսում, քայլել ջունգլիներում ու հաց ուտել առյուծի հետ, անվերջ ու հավերժ սիրել միմյանց՝ ժամանակների ու տարածության անկապորեն հատված մի խաչմերուկում...

Նրանք կարող էին իրար չհանդիպել, ու ապրել ամեն մեկն իրա կյանքով....

Նրանք կարող էին ապրել միմյանց հետ ու չգիտակցել միմյանց ներկայությունը...

Նրանք կարող էին հանդիպել մի օր ու իրար ասել՝ «բարև. ոնց ես».... նստել Թունանյանի Ջազվեում, խմել մի բաժակ սուրճ, չուտել վերջին սիսեռահատիկը, հետո բաժանվել՝ այլևս երբեք չտեսնվելու չակնկալիքով...

Նրանք կարող էին ընտրել անհուն ժամանակի՝ հավերժորեն բաժանված անհամար ապագաների պահերից մի մեկն ու նրա թևերին նստած՝ սլանալ դեպի անվերջություն....

Անհուն ժամանակը հավերժորեն բաժանվում է անհամար ապագաների:

Դրանցից մեկում կլորակի եզրույթով ասպոս գաղտնիքի տեսքով ժպտում էր ինձ, մյուսում դեբիլի կեցվածքով ու հորթային բովանդակությամբ սֆաթով պլշվել էր վրես՝ մտնելով հոգուս ամենաթաքուն անկյուններն ու քանդորտել մեջի էղածն ու չեղածը..... Այդ ապագաներից մեկում ես երագել էի նրան, մյուսում՝ գտել իմ փայ հորթին..... երրորդում՝ ողբում էի ստոժանուս ցավը....

Հորինվածքս վերջացնելու համար՝ անհուն մտքերիս ալիքների ֆլուկտուացիաներից ընտրեցի հորինվածքիս սկիզբը.

Գիշերվա ժամը 3 անց էր 48 րոպե: Ինչպես պարզեցի դրանից վայրկյաններ անց: Տախշան էրագի մեջ անկապ ժպտում էր կողքով անցնող հորթի էրեսին, երբ Ջեյմս Բրաունը ձենը գցեց գլուխը(հեռախոսիս զանգը Ջեյմ Բրաուն ա):

Բայց ես կարող էի չսկսել այդպես, ու, մասնավորապես, սկսել այսպես.

-Գիշերվա ժամը 3 անց էր 48 րոպե, երբ Ջեյմս Բրաունը ձենը գցեց գլուխը: Տախշան էրագ չէր տենում, ու էտի իրա տանձին էլ չէր: Ինքը քնած էր կամ քնած չէր, էրագ տենում կամ չէր տենում. էդ հեչ կարևոր չէր: Ինքը էկել էր Թունանյանի Ջագվեից, բայց կարող էր և չգալ կամ էլ չգնալ:

Գոյություն ունեցող բոլոր տարբերակներից ինքն ընտրել էր կոնկրետ այդ մեկը, ու այդ տարբերակը՝ լուծվելով ժամանակի ու տարածության մեջ՝ կարող էր բերել ինչ-որ մի բանի կամ էլ՝ ոչ: